

Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ

Վ. Գաբրիելյան

Գ. Խաչատրյան

«» ապրիլի 2011 թ.

29 ապրիլի 2011 թ.
N 20

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում մշտապես հաշվառված կամ մշտապես բնակվող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից ԱՏԳԱԱ 8702 և 8703 ծածկագրերին դասվող ապրանքների տեղափոխումը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով թույլատրվում է մեկ տարվա ընթացքում միայն երկու անգամ՝ տասնհինգ օրը չգերազանցող ժամկետով:

Նշված դրույթների կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 38-րդ հոդվածով սահմանված 15 օր ժամկետը հաշվարկվում է անձանց կողմից մեկ տարվա ընթացքում ԱՏԳԱԱ 8702 և 8703 ծածկագրերին դասվող ապրանքների երկու անգամ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում գտնվելու օրերի հանրագումարով:

2. ՀՀ մաքսային օրենսգրքի 38-րդ հոդվածում սահմանված մեկ տարվա սկիզբ է համարվում նույն հոդվածում սահմանված անձանց կողմից ԱՏԳԱԱ 8702 և 8703 ծածկագրերին դասվող ապրանքների՝ առաջին անգամ ՀՀ սահմանով տեղափոխելու օրը: